Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3

Վարկ թիվ 2993-ARM

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	7
Կանխավճարի հաշվի (ԱՄՆ դոլար) հաշվետվություն	8
Կառավարության համաֆինանսավորման հաշվի (ՀՀ դրամ) հաշվետվություն	9
ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ	10
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

Հայաստանի Հանրապետության կառավարությանը,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) 2993-ARM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3-ի (Ծրագիր) կից ներկայացված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, կանխավճարի հաշվի հաշվետվությունը և կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունը (ԾՄՀ), որոնք ներկայացվել են Ասիական Զարգացման Բանկ՝ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 2993-ARM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով՝

- Կից Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները և ներկայացված ծանոթագրությունները, որոնք նույնպես ենթարկվել են աուդիտի, տալիս են Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3-ի՝ (թիվ 2993-ARM վարկային համաձայնագիր) 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ընթացքում ստացված և վճարված դրամական միջոցների ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրատարակված Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՍ)՝ *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»*, Ասիական Զարգացման Բանկի ուղեցույցների («Ծրագրի Ֆինանսական Կառավարում և Վերլուծություն») և թիվ 2993-ARM վարկային համաձայնագրի համապատասխան դրույթների:
- «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ն Ասիական Զարգացման Բանկից ստացված բոլոր վարկային միջոցներն օգտագործել է միայն Ծրագրի նպատակների համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև ստորագրված վարկային համաձայնագրի, ինչպես նաև Ծրագրի միջոցներից ստացված գումարները չեն օգտագործվել այլ նպատակների համար:
- «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ը հաշվետու ամսաթվի դրությամբ բավարարում է թիվ 2993-ARM վարկային համաձայնագրի բոլոր ֆինանսական դրույթները:

Grant Thornton

Ի հավելումն,

- (ա) Ծախսերի մասին հաշվետվության (ԾՄՀ) հետ կապված՝ բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են Ասիական Զարգացման Բանկ կատարված ծախսերի հատուցման նպատակով, ինչպես նաև (բ) ծախսերն ընդունելի են թիվ 2993-ARM վարկային համաձայնագրի շրջանակներում:
- (ա) Կանխավճարի հաշիվը և կառավարության համաֆինանսավորման հաշիվը տալիս են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ստացված և վճարված դրամական միջոցների իրական պատկերը, և (բ) ստացված և վճարված դրամական միջոցները հիմնավորում են կանխավճարի հաշվի մարումը/համալրումը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ից (Կազմակերպություն)՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որտեղ ներկայացված են հաշվետվությունների պատրաստման հիմքերը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ղեկավարությանը՝ Ասիական Զարգացման Բանկի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՀՀՀՀՄՍ *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի»*, 2993-ARM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների և Ասիական Զարգացման Բանկի ուղեցույցների: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Grant Thornton

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Grant Thornton

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

30 հունիսի 2021թ.

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ»
00040569

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար		Փաստացի				Բյուջե		Տարբերություն	
	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվների սկզբնական մնացորդ	4	1,251,430		783,775					
Ավելացնել՝ Ֆինանսավորում									
ԱԶԲ վարկ թիվ 2993-ARM	5	2,940,522	44,104,156	10,284,276	41,163,634				
Կառավարության համաֆինանսավորում	6	446,593	12,349,043	2,052,478	11,902,450				
Ընդամենը ֆինանսավորում		3,387,115	56,453,199	12,336,754	53,066,084				
Նվազեցնել՝ Ծախսեր									
ԱԶԲ վարկային համաձայնագիր թիվ 2993-ARM	7.1	(3,049,283)	(43,856,454)	(9,927,813)	(40,807,171)	(3,377,385)	(44,184,556)	328,102	328,102
Կառավարության համաֆինանսավորում	7.2	(450,977)	(11,473,384)	(1,948,579)	(11,022,407)	(1,511,901)	(12,534,308)	1,060,924	1,060,924
Ընդամենը ծախսեր		(3,500,260)	(55,329,838)	(11,876,392)	(51,829,578)	(4,889,286)	(56,718,864)	1,389,026	1,389,026
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		(67,583)	(52,659)	7,293	14,924				
Բանկային հաշիվների վերջնական մնացորդ	4	1,070,702		1,251,430					

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 30-ին՝

Ստեփան Մաչյան
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Մարինա Սաֆարյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ղեկավար, գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների մասկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Կանխավճարի հաշվի (ԱՄՆ դոլար) հաշվետվություն

Վարկային համաձայնագիր թիվ 2993-ARM

ԱՄՆ դոլար

	2020թ.	2019թ.
Սկզբնական մնացորդ հունվարի 1-ի դրությամբ	356,463	-
Ավելացնել՝		
ԱԶԲ ֆինանսավորում	330,740	1,047,810
Ընդամենը մուտքեր	330,740	1,047,810
Նվազեցնել՝		
Ծրագրային ծախսեր	(439,501)	(691,347)
Ընդամենը ելքեր	(439,501)	(691,347)
Վերջնական մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	247,702	356,463

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 30-ին՝

Ստեփան Մաչյան
Գլխավոր տնօրեն

Մարինա Սաֆարյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ղեկավար, գլխավոր հաշվապահի գործառույթները կատարող

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Կառավարության համաֆինանսավորման հաշվի (ՀՀ դրամ) հաշվետվություն

Վարկային համաձայնագիր թիվ 2993-ARM

ԱՄՆ դոլար

	2020թ.	2019թ.
Սկզբնական մնացորդ հունվարի 1-ի դրությամբ	106,542	1,951
Ավելացնել՝		
Կառավարության համաֆինանսավորում	553,153	2,054,429
Բյուջե վերադարձված գումար	(106,560)	(1,951)
Ընդամենը մուտքեր	446,593	2,052,478
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	(2,875)	692
Նվազեցնել՝		
Ծրագրային ծախսեր	(450,977)	(1,948,579)
Ընդամենը ելքեր	(450,977)	(1,948,579)
Վերջնական մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	99,283	106,542

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 30-ին՝

Ստեփան Մաչյան
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Մարինա Սաֆարյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ղեկավար, գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

Վարկային համաձայնագիր թիվ 2993-ARM
ԱՄՆ դոլար
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

Դիմումի համար	Հոդված	Աշխատանքներ, ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ և Ծրագրի կառավարման աջակցություն	
		ԱԶԲ ֆինանսավորման մաս*	Ստացման ենթակա գումար
00115	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	380,937
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	127,257
00121	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	160,086
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	170,676
Ընդամենը			838,956

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

Դիմումի համար	Հոդված	Աշխատանքներ, ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ և Ծրագրի կառավարման աջակցություն	
		ԱԶԲ ֆինանսավորման մաս*	Ստացման ենթակա գումար
00099	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	2,912
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	66,588
00104	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	8,894
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	59,916
00105	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	69,500
00114	2. Խորհրդատվական ծառայություններ	100%	139,373
	4. Ծրագրի կառավարման աջակցություն	100%	60,627
Ընդամենը			407,810

*Առանց Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հարկերի և տուրքերի կիրառման:
Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 30-ին՝

Ստեփան Մաչյան
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Մարինա Սաֆարյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման գծով տեսուչ, գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

ը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեություն

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ն (Կազմակերպություն) իրականացնում է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3-ը (Ծրագիր), որը ֆինանսավորվում է 2014թ. մարտի 11-ին կնքված 2993-ARM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) կառավարության միջև: Վարկն ուժի մեջ է մտել 2014թ. հուլիսի 24-ին:

Ծրագրի ֆինանսավորման բյուջեն հետևյալն է.

Վարկային համաձայնագիր թիվ 2993-ARM

	ԱՄՆ դոլար
ԱԶԲ	100,000,000
ՀՀ Կառավարություն	32,443,503
Ընդամենը	132,443,503

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում զարգացնել ենթատարածաշրջանային և պետական ճանապարհատրանսպորտային ցանցը: Ծրագրի իրականացման արդյունքում՝

ա) կդյուրացվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհները,

բ) կմեծանա առևտրի շրջանառությունը և մրցակցությունը,

գ) կնվազեն փոխադրումների ծախսերը,

դ) կմեծանա շուկաների, աշխատատեղերի և սոցիալական ծառայությունների հասանելիությունը, և

ե) կբարելավվի կառավարումը:

Ծրագիրը կազմված է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

Մաս Ա Թալին և Լանջիկ քաղաքների միջև 18.7կմ երկարությամբ երկուղի ճանապարհահատվածի վերակառուցում և այդ հատվածի ընդլայնում՝ վերածելով այն երկկողմանի երթևեկության քառուղի մայրուղու,

Մաս Բ ճանապարհային երկարաժամկետ ենթաոլորտային ծրագրի, ճանապարհային ակտիվների կառավարման և ճանապարհների սպասարկման կառավարման համակարգի նախապատրաստում և իրականացում,

Մաս Գ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի (304կմ) Արտաշատից Քաջարան հատվածի տեխնիկատնտեսական ուսումնասիրության պատրաստում, և

Մաս Դ Ծրագրի իրականացման աջակցություն և Ներդրումային ծրագրի հետագա տրանշի նախապատրաստում, այդ թվում՝ դրա հետ կապված տեխնիկատնտեսական ուսումնասիրության և մանրամասն ինժեներական նախագծի պատրաստում:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը:

Ծրագիրն իրականացվում է հետևյալ հոդվածներով.

Վարկային համաձայնագիր թիվ 2993-ARM

Կատեգորիա			ԱԶԲ ֆինանսավորում
Համար	Տեսակ	ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող Կատեգորիայի ընդհանուր հատկացված գումար (ԱՄՆ դոլար)	Տոկոսագումարը և Վարկի հաշվից տրամադրվող գումարի հիմքը
1	Աշխատանքներ	65,000,000	պահանջվող ընդհանուր ծախսերի 100%-ը*
2	Խորհրդատվական ծառայություններ	14,200,000	պահանջվող ընդհանուր ծախսերի 100%-ը*
3	Ապրանքներ	2,400,000	պահանջվող ընդհանուր ծախսերի 100%-ը*
4	Ծրագրի կառավարման աջակցություն	3,400,000	պահանջվող ընդհանուր ծախսերի 100%-ը*
5	Տոկոսագումար և պարտավճար	5,000,000	վճարման ենթակա գումարների 100%-ը
6	Չհատկացված	10,000,000	
	Ընդամենը	100,000,000	

* Առանց Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հարկերի և տուրքերի կիրառման:

Ծրագրի շրջանակներում հողերի օտարում և վերաբնակեցում ծախսերի ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ Կառավարության աղբյուրներից:

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրպ., Կառավարական տուն 3:

Ծրագրի շրջանակներում ընդգրկված աշխատակիցների միջին քանակը հաշվետու տարվա ընթացքում կազմել է 11 մարդ (2019թ.՝ 12):

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Պատրաստման հիմքերը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ համաձայն ՀՀՀՀՄՍ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքի»: Համաձայն հաշվապահական հաշվառման այս սկզբունքի՝ դրամական մուտքերը ճանաչվում են ստացման պահին և ծախսերը ճանաչվում են վճարման պահին: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են Ասիական Զարգացման Բանկի ուղեցույցների («Ծրագրի Ֆինանսական Կառավարում և Վերլուծություն»), ինչպես նաև թիվ 2993-ARM վարկային համաձայնագրի դրույթների համաձայն:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Կառավարության կողմից համաֆինանսավորման գումարները և դրա հաշվին կատարված վճարումները, որոնք տրվում են ՀՀ դրամով, փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից գործարքի նախորդ օրը հրապարակած փոխարժեքով: Ասիական Զարգացման Բանկի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են LFIS (https://lfis.adb.org) համակարգի փոխարժեքով:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամով դրամային հոդվածները վերահաշվարկվում են ԱՄՆ դոլարի՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմել է 522.59 ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 479.7 ՀՀ դրամ):

2.3 Ֆինանսավորում

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է որպես այդպիսին և ներառվում է Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ կապալառուները կամ խորհրդատուները վճարվում են վարկային հաշվից ուղղակի վճարման ընթացակարգով: Կանխավճարի հաշվի ֆինանսավորումը ճանաչվում է և ներառվում է ծրագրի ֆինանսական հաշվետվություններում միայն այն ժամանակ, երբ վարկային հաշվից գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարանում բացված կանխավճարի հաշվին:

Կառավարության համաֆինանսավորման գումարները ճանաչվում են որպես ֆինանսավորում և ներառվում են Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում միայն այն ժամանակ, երբ դրանք փոխանցվել են Ծրագրի ընթացիկ հաշվին («Կառավարության համաֆինանսավորման հաշիվ»), որը նույնպես բացվել է Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարանում:

2.4 Պլանավորված ծախսեր

Տարվա վերջի դրությամբ «Ծրագրի պլանավորված ծախսերը» բաղկացած են նախորդ տարվա վերջի դրությամբ «Ծրագրի փաստացի ծախսերի» և հաշվետու տարվա բյուջեի ծախսերի հանրագումարից:

2.5 Ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են որպես այդպիսին և ներկայացվում են ծրագրի ֆինանսական հաշվետվություններում, երբ կատարվում են վճարումներ մատակարարներին՝ ապրանքների, աշխատանքների և/կամ ծառայությունների գծով: Վճարումները կատարվում են վարկային հաշվից ուղղակի վճարման եղանակով կամ կանխավճարի և Կառավարության համաֆինանսավորման հաշիվներից: Հիմնական միջոցի ձեռքբերման գծով ծախսը ճանաչվում է Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում, որը որոշ օգտագործողների համար բացահայտված է ծանոթագրություն 3-ում:

3 Հիմնական միջոցներ

Ծրագրի հիմնական միջոցները բաղկացած են Ծրագրի իրականացման ժամանակաշրջանում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի գործունեությունն ապահովելու նպատակով ձեռք բերված գույքից և սարքավորումներից: Հիմնական միջոցների արժեքը ներառում է ձեռքբերման գինը և ձեռքբերման հետ կապված այլ ծախսեր, որոնք ֆինանսավորվել են ԱԶԲ միջոցներից: Ծրագրի շրջանակներում փաստացի օգտագործվող հիմնական միջոցները հետևյալն են.

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Համակարգչային ծրագիր և սարքավորումներ	21,010	21,010
Գույք	833	833
Այլ	687	687
	22,530	22,530

4 Բանկային հաշիվներ

Ծրագրի բանկային հաշիվների մնացորդներն արտացոլված են ստորև ներկայացված աղյուսակում.

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
ԱԶԲ կանխավճարի հաշիվ ԱՄՆ դոլարով	247,702	129,446,588
ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ ՀՀ դրամով	99,283	51,884,379
Բանկային հաշիվ ՀՀ դրամով (հաշիվ՝ 15100-09017860800)	723,717	378,207,374
Ընդամենը	1,070,702	559,538,341

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
ԱԶԲ կանխավճարի հաշիվ ԱՄՆ դոլարով	356,463	170,995,301
ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ ՀՀ դրամով	106,542	51,108,119
Բանկային հաշիվ ՀՀ դրամով (հաշիվ՝ 15100-09017860800)	788,425	378,207,374
Ընդամենը	1,251,430	600,310,794

5 ԱԶԲ ֆինանսավորում

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային համաձայնագիր թիվ 2993-ARM				
Կանխավճարի հաշիվ	330,740	5,892,159	1,047,810	5,561,419
Ուղիղ վճարում	1,714,428	34,599,540	8,072,051	32,885,112
Տոկոսներ	895,354	3,612,457	1,164,415	2,717,103
	2,940,522	44,104,156	10,284,276	41,163,634

6 Կառավարության համաֆինանսավորում

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կառավարության համաֆինանսավորում	553,153	10,027,644	2,054,429	9,474,491
Նվազեցնել. բյուջե վերադարձված գումար	(106,560)	(115,246)	(1,951)	(8,686)
	446,593	9,912,398	2,052,478	9,465,805
Կառավարության համաֆինանսավորում, ՀՕՏԾ ֆինանսավորում	-	2,533,963	-	2,533,963
Նվազեցնել. բյուջե վերադարձված գումար	-	(97,318)	-	(97,318)
	-	2,436,645	-	2,436,645
	446,593	12,349,043	2,052,478	11,902,450

7 Ծախսեր

7.1 ԱԶԲ միջոցներից

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի			2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Վարկ թիվ 2993-ARM	Փաստացի	Բյուջե	Տարբերություն	Փաստացի	Բյուջե	Տարբերություն
Աշխատանքներ	432,718	848,270	(415,552)	29,510,258	29,925,810	(415,552)
Խորհրդատվական ծառայություններ	1,447,858	1,303,276	144,582	8,153,408	8,008,826	144,582
Ապրանքներ	-	17,490	(17,490)	332,620	350,110	(17,490)
Ծրագրի կառավարման աջակցություն	273,353	312,995	(39,642)	2,247,711	2,287,353	(39,642)
Տոկոսագումար և պարտավճար	895,354	895,354	-	3,612,457	3,612,457	-
	3,049,283	3,377,385	(328,102)	43,856,454	44,184,556	(328,102)

Ծրագրի կառավարման աջակցության ծախսերը ներկայացված են ստորև.

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխհատուցում աշխատակիցներին	188,867	1,656,872
Վարձակալական ծախսեր	54,239	388,474
Խորհրդատվական ծախսեր	13,907	67,927
Գործուղման ծախսեր	86	27,912
Մեքենա-սարքավորումների ծախսեր	-	18,976
Գրասենյակային ծախսեր	2,846	19,751
Հաղորդակցման ծախսեր	264	12,313
Ներկայացուցչական ծախսեր	838	5,020
Այլ ծախսեր	12,306	50,466
Ընդամենը	273,353	2,247,711

Աշխատակիցների փոխհատուցման ծախսերում ներառված է 2,455 ԱՄՆ դոլար (2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարի՝ զրոյական), որոնք վերաբերում են մեկ այլ ծրագրի շրջանակներում կատարվող վճարներին: Այս գումարը մարվել է հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

ԱՄՆ դոլար	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի			2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Վարկ թիվ 2993-ARM	Փաստացի	Բյուջե	Տարբերություն	Փաստացի	Բյուջե	Տարբերություն
Աշխատանքներ	6,623,793	7,399,242	(775,449)	29,077,540	29,852,989	(775,449)
Խորհրդատվական ծառայություններ	1,563,957	1,928,156	(364,199)	6,705,550	7,069,749	(364,199)
Ապրանքներ	283,005	279,777	3,228	332,620	329,392	3,228
Ծրագրի կառավարման աջակցություն	292,643	319,095	(26,452)	1,974,358	2,000,810	(26,452)
Տոկոսագումար և պարտավճար	1,164,415	1,164,415	-	2,717,103	2,717,103	-
	9,927,813	11,090,685	(1,162,872)	40,807,171	41,970,043	(1,162,872)

Ծրագրի կառավարման աջակցության ծախսերը ներկայացված են ստորև.

ԱՄՆ դոլար	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխհատուցում աշխատակիցներին	195,113	1,468,005
Վարձակալական ծախսեր	72,415	334,235
Խորհրդատվական ծախսեր	12,600	54,020
Գործուղման ծախսեր	2,878	27,826
Մեքենա-սարքավորումների ծախսեր	-	18,976
Գրասենյակային ծախսեր	2,025	16,905
Հաղորդակցման ծախսեր	667	12,049
Ներկայացուցչական ծախսեր	381	4,182
Այլ ծախսեր	6,564	38,160
Ընդամենը	292,643	1,974,358

7.2 Կառավարության համաֆինանսավորման միջոցներից

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի			2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Վարկ թիվ 2993-ARM	Փաստացի	Բյուջե	Տարբերություն	Փաստացի	Բյուջե	Տարբերություն
Աշխատանքներ	33,632	942,409	(908,777)	7,742,148	8,650,925	(908,777)
Խորհրդատվական ծառայություններ	395,948	503,449	(107,501)	1,892,695	2,000,196	(107,501)
Հողերի օտարում և վերաբնակեցում	-	-	-	1,650,508	1,650,508	-
Ապրանքներ	-	45,474	(45,474)	81,747	127,221	(45,474)
Ծրագրի կառավարման աջակցություն	21,397	20,569	828	106,286	105,458	828
	450,977	1,511,901	(1,060,924)	11,473,384	12,534,308	(1,060,924)

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարձակալական ծախսեր	10,695	65,578
Խորհրդատվական ծախսեր	4,892	22,403
Մեքենա-սարքավորումների ծախսեր	-	3,460
Գրասենյակային ծախսեր	221	3,046
Հաղորդակցման ծախսեր	23	2,177
Ներկայացուցչական ծախսեր	67	301
Այլ ծախսեր	5,499	9,321
Ընդամենը	21,397	106,286

ԱՄՆ դոլար	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի			2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Վարկ թիվ 2993-ARM	Փաստացի	Բյուջե	Տարբերություն	Փաստացի	Բյուջե	Տարբերություն
Աշխատանքներ	1,460,812	2,107,446	(646,634)	7,708,516	8,355,150	(646,634)
Խորհրդատվական ծառայություններ	387,818	661,052	(273,234)	1,496,747	1,769,981	(273,234)
Հողերի օտարում և վերաբնակեցում	-	8,221	(8,221)	1,650,508	1,658,729	(8,221)
Ապրանքներ	79,826	79,055	771	81,747	80,976	771
Ծրագրի կառավարման աջակցություն	20,123	23,366	(3,243)	84,889	88,132	(3,243)
	1,948,579	2,879,140	(930,561)	11,022,407	11,952,968	(930,561)

Ծրագրի կառավարման աջակցության ծախսերը ներկայացված են ստորև.

ԱՄՆ դոլար	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարձակալական ծախսեր	14,721	54,883
Խորհրդատվական ծախսեր	4,248	17,511
Մեքենա-սարքավորումների ծախսեր	-	3,460
Գրասենյակային ծախսեր	109	2,825
Հաղորդակցման ծախսեր	21	2,154
Ներկայացուցչական ծախսեր	49	234
Այլ ծախսեր	975	3,822
Ընդամենը	20,123	84,889

8 «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի կողմից ստացված գումարների և ԱՋԲ-ի փոխհատուցումների համադրում

Վարկային համաձայնագիր թիվ 2993-ARM
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

ԱՄՆ դոլար	ԱՋԲ	Կազմակերպություն	Տարբերություն
Աշխատանքներ			
00123	351,522	351,522	-
00124	81,196	81,196	-
	432,718	432,718	-
Խորհրդատվական ծառայություններ			
00115	380,916	380,916	-
00116	266,232	266,232	-
00117	461,280	461,280	-
00118	192,200	192,200	-
00120	167,844	167,844	
00121	160,086	160,086	
00122	194,154	194,154	-
	1,822,712	1,822,712	-
Ծրագրի կառավարման աջակցություն			
00115	127,257	127,257	-
00121	170,655	170,655	-
	297,912	297,912	-
Հատուկ հաշվի նվազեցում			
00115	(508,174)	(508,174)	-
	(508,174)	(508,174)	-
Տոկոսներ	895,354	895,354	-
Ընդամենը	2,940,522	2,940,522	

9 Ծրագրի իրականացում

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվել է վճարումների մասով միայն 44%-ը (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 41%-ը), իսկ փաստացի կատարված աշխատանքների (Շինարարություն Տրանշ 3) մասով՝ 41%-ը (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 29%-ը):